

ԹԻՎ 13 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՁՆԱԺՈՂՈՎ

«29» դեկտեմբերի 2022թ.
ք.Արարատ






ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N28

ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԸՆՏՐՎԱԾ ԵՎ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ՄԱՆԴԱՏԸ «ԻՄ
ՀՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻ
ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՋՈՐԴ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վեղի համայնքի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի «26»-ի N4155 գրությունը « Վեղի համայնքի ավագանու անդամ Ժաննա Պավելի Կազրամանյանի՝ ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու մասին» և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 8-րդ մասով՝ թիվ 13 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Մ Է .

Վեղի համայնքի ավագանու «Իմ Հզոր Համայնք» կուսակցության ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրվում է «Իմ Հզոր Համայնք» կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Շողիկ Հայկի Գյուրջյանին:

Հանձնաժողովի նախագահ՝  **Հրայրա Ստեփանյան**
Նախագահի տեղակալ՝  **Արտակ Ջաքարյան**
Հանձնաժողովի քարտուղար՝  **Աննա Մովսիսյան**
Անդամներ՝  **Լիլիթ Քոչարյան**
 **Արսեն Պողոսյան**

